ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- սեպտեմբերի 2022 թվականի №---Ա
ք.Երևան

«ՇԱՂԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0261 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի №382Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 19-ին հայտով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 15 տարով երկարաձգել Հանձնաժողովի 2007 թվականի սեպտեմբերի 27-ի №382Ա որոշմամբ «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն)՝ տրամադրված «Շաղատ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան)՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0261 լիցենզիայի (այսուհետ՝ №0261 լիցենզիա) գործողության ժամկետը, որն ավարտվում է 2022 թվականի սեպտեմբերի 27-ին: Ընկերության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից 2006 թվականի օգոստոսի 7-ին տրամադրված №1165 ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ պայմանների 6-րդ կետի համաձայն՝ ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետ է սահմանվում Կայանի նախագծով նախատեսված կառուցման ժամկետի ավարտը: Կայանի շահագործման ժամանակ ջրօգտագործման թույլտվությունը ենթակա է վերաձևակերպման: Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու խնդրանքով դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 77-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված արտադրության ժամանակահատվածի երկարաձգման հայտը պետք է պարունակի նաև ջրօգտագործման թույլտվությունը, իսկ խմելու ջրատարների կամ ոռոգման համակարգերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների դեպքում՝ նաև այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն,

գ) Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը մերժում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների, նույն կարգի կամ այլ իրավական ակտերի պահանջներին,

դ) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու դեպքում, նույն մասի վերջին պարբերության համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով,

ե) №0261 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի օգոստոսի 19-ի հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում գործող իրավակարգավորումների պահանջներին: Մասնավորապես, հայտին կից ջրօգտագործման թույլտվության ժամկետ սահմանված է մինչև Կայանի կառուցման ժամկետի ավարտը, իսկ մինչև սույն որոշման կայացումն Ընկերության կողմից չի ներկայացվել գործող ջրօգտագործման թույլտվություն: Նշվածը, Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, հիմք է երկարաձգման հայտը մերժելու համար և հաշվի առնելով, որ №0261 լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է 2022 թվականի սեպտեմբերի 27-ին, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն առանց պահանջվող փաստաթղթերի երկարաձգվել չի կարող, լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման, և

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 12-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի

2-րդ մասը և 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի օգոստոսի 19-ին Հանձնաժողով ներկայացված №0261 լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2007 թվականի սեպտեմբերի 27-ի «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շաղատ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №382Ա որոշումը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Շաղատ» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող էլեկտրական էներգիայի գնման «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված 15 տարվա երաշխիքի ժամկետը լրանում է 2022 թվականի սեպտեմբերի 27-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, բացառությամբ 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2022թ.